

ԲԱՆԲԵՐ ՄԱՏԵՆԱԴԱՐԱՆԻ

/ԵՐԵՎԱՆ

№ 13

1980

ՎՐԵԺ ՆԵՐՍԻՍՅԱՆ

ՀԱՅԵՐԵՆ ՆՈՐ ԶԵՌԱԳՐԵՐ ԱՆԳԼԻԱՅՈՒՄ

Բրիտանական գրադարանի հայկական բաժնի վարիչ, երիտասարդ հայագետ դոկտ. Վրեժ Ներսիսյանը ձեռնամուխ է եղել Բրիտանական գրադարանի (նախկին Բրիտանական թանգարան) և Մեծ Բրիտանիայի մի շարք գիտական այլ հաստատություններում ու մասնավոր անձանց մոտ պահպան, և ցարդ Հնկարագրված, հայերեն ձեռագրերի նկարագրությանը:

Ստորև տպագրում ենք 1978—79 թթ. լոնդոնում աճուրդով վաճառված և տեղի հայերի կողմից գնված երեք ձեռագրերի նկարագրությունը:

ԽՄԲ.

1

ՇԱՐԱԿԱՆՈՅ

[Գայլու ո՞ւխա]

ԶԿԲ—1319

Գրիչ՝ [Գրիգոր Դալիբար]:

Թերը՝ 293, Նյուր՝ մագաղաթ և թուղթ: Մեծություն՝  $17 \times 12,7$ : Գրույրում՝ միասյուն: Գիր՝ մանր բոլորգիր: Տող՝ 23: Մանրանկարչություն — ճակատազարդեր՝ 81ա, 142բ, 170ա, 235բ, բուսական լուսանցազարդեր և թոշնագիր զարդագրեր: Կազմ՝ կաշեպատ տախտակ, դրոշմազարդ վեցթևյան աստղ և փոքրիկ վարդյակ աստղի կենտրոնում: Վիճակ՝ սկզբից և վերջից պակասավոր: 217ա և 254բ թերթերի ճակատազարդերը մկրատված և հանված:

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ

1ա—293բ [Շարակնոց]:

Բաղկացած է 2 մասից՝ 1ա—275ա և 276ա—293բ: Երկրորդ մասն սկսվում է «Կանոնովն սրբոյն Ներսիսի Հայոց հայրապետի» շարականով և ավարտվում «Ճանապարհ բարի Քրիստոս» Արեագալի ժամերգության երգով:

ՀԻՇԱՏԱԿԱՐԱՆ

Գրշի

275բ Փա՛ռք... Գրեցաւ եղանակաւոր տառս ի թուականիս Հայոց ԶԿԲ (1319), ի թագաւորութեանս Հայոց Աւշի որդույ արքային Հայոց երկրորդ կեռնի և ի... (շար. թափված):

## Հետազայի

291ր Սարգիս բանին սպասաւոր, աշխարհօ [Տ]այրայնացի, քաղաքօ Մշեցի, աշակերտելայլ մեծ հոկտոր և անելյաղթ փիլիսոփաի Գրիգորի մականուամբ Մշեցի կոչիր, և յետ վաղջանի նորա աշակերտս նորա Մաղաքիայ Դենեցոյ, որ անկեղծ սիրով և հայրական խնամով [կըթեր դմեզ] յիմաստս աստուածային հանճարոյ, և ի թուարերութեան Արյենթական տումարի ԶՀԵ (1526) ամին, ի թագաւորութեան Սովորան Սովէմանին և ի պարովնութեան Տարան գաւառին Ամիր Շարափին, և ի յառաջնորդութեան սուրբ ուխտիս Գլակալ [1] Սահեփանոս արքեպիսկոպոսին գնեցի Շարակնոցս ի վայելումն և յիշատակ անձին իմոյ, և ծնողաց իմոց, և ամենայն արեանառու մերձաւորաց իմոց: Եւ ով ոք որ հանդիպէք այս զրոցս տեսանելով կամ գաղափարելով կամ աւկտելով, յիշեցէք ի Քրիստոս զերախտաւոր վարդապետին իմ զԳրիգոր և զՄաղաքիա, և դիս՝ զՍարգիս բանի սպասաւոր, և զՃնաւղսն իմ, զամենայն եռախտաւորս իմ, և դուք յիշեալ լիցից ի Քրիստոսէ Աստուծոյ մերոյ, և ձեզ յիշողացդ և մեզ յիշեցելոցս առ հասարակ ողորմեսցի: Ի վայելումն անձին իմոյ՝ յիշատակ Սարգիս բանի սպասաւորի, որ է լցեալ իմաստութեամբ՝ շնորհաւք Սուրբ Հոգւոյն. ամէն:

Կնքադրոշ՝ 7ա «Մ. Վ. Ա» (կրկ.):

Զեռագրին կցված է Հ. Ն. Ակինյանի Բեյրութ, 5 հունիս 1945 թվակիր մի նամակը՝ հասցեագրված պրն. Մ. Սերոբյանին, ուր ենթադրում է, թե այս Շարակնոցը պետք է զրված լինի Երուսաղեմի № 2354 Շարակնոցի գրիշ Գրիգոր դպրի ձեռքով՝ նույն Գայլու ուխտում և մեջ է բերում հիշատակարանը (տե՛ս «Մայր ցուցակ ձեռագրաց Սրբոց Յակոբեանց», Հատ. է, էջ 494):

2

## ԺՈՂՈՎԱԾՈՒ

Բարերդ

ՈՀԲ—1623

Գրիշ՝ թորոս սարկավագ: Սացող՝ Ալեքսանոս վարդապետ:

Թերը՝ 224 (չզրված՝ 221ր—222ր), նյուր՝ թուղթ: Մեծուրյուն՝  $14 \times 10,5$ : Գրուրյուն՝ միասյուն: Գիր՝ բոլորգիր: Տող՝ 18: Մանրանկարչուրյուն— ճակատավարդեր՝ 3ա, 119ա: Կազմ՝ կաշեպատ տախտակ, դրոշմաղարդ հյուսածո շրջանակով և վարդյականման զարդերով: Պատառիկ-պահպանակ՝ սկզբում և վերջում երկու թերթ թուղթ, միասյուն, նոտրդիր, մասն «Թղթին Յովհաննուա: Վիճակ՝ ժթ և ի պրակները թափված, կազմի փականներն ընկած, պատառիկ-պահպանակի սկզբի թերթերը պոկված:

## ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ

Ա. 3ա—118ր Աղամգիրք է տեառն Առաքել Սիւնեցոյ: Ասացեալ ի վերայ Վցեօրեալ արարշուրեան—նախ քան զեղեալքս ամեններեան՝ /Երրորդութիւնն անեղական... /Աւրծնեալ Հայրն և Որդին և Սոդին [Տէր]:

Միայն Ա. և Բ հատորները: Ա հատորն ունի 1907 թ. հրատա-  
րակության 26 գլուխներից 20-ը (1—8, 11—19, 21—23) և 2 հա-  
վելյալ գլուխներ՝ գլ. 17. «Վասն յէ՞ր այսպիսի պատճառաւ աւձն  
և բանսարկուն խարեցին զնախնին Աղամ», գլ. 21. «Վասն երրոր-  
դութեան», իսկ Բ հատորը՝ տպագրի 8 գլուխներից 3-ը (1, 4, 8) և  
1 հավելյալ գլուխ՝ գլ. 3. «Վասն զգուշանալո զմեղ ի մեղաց»:  
Տարբեր է նաև Ա հատորի հիշատակարանը (տե՛ս ստորև):

### —/Յիշատակարան Ա. հատորի/

Այսքան խորհուրդ յատուկ բանի,

Որ յայտնեցաք յայսմ տառի,

Չեզ աղաշեմք, լսողք բանի,

Յիշման առնէք զիս արժանի:

Թվականս մեր ութ հարիւրի,

Յիսուներեր յարաբարդի (1404),

Սա ասացաւ Առաքելի՝

Անուամբ միայն վարդապետի:

ԶԴափիք՝ հայրն իմ գովելի,

Եւ զՄելիք՝ մայրն իմ նազելի,

Ըստէր Բարսեղն և զաէր Դրիգոր՝

Մեծ ճպնաղեացն յոյժ պանծալի:

Զձեզ աղաշեմք աղերսալի,

Յիշման առնէք զմեղ արժանի,

Յարբայութեան լինիք որդի,

Ի գալըստեան Տեառն Յիսուսի:

### Բ 119ա—220ա /Բանի զանազանի/

1. 119ա—220ա /Յովհաննու Թովկուրանցոյ Մեկնուրին Արարածոց/:

Սովոչս խաւի ընդ Աստուծոյ և ասէ— Սկըսաւզն է ըսկիդրն ըսկրպրան՝ /Ա-  
րարիշ Աստուածն յաւիտեան... /զԹովկուրանցիս միշտ յիշեցէք, հայրք պա-  
տուական:

2. 161ա—169բ Ռոտանաւու Կարապետ վարդապետի [Բաղիշեցոյ]՝  
տացեալ ի վերայ Արարածոց այս որ գովի: Բաժին է Քամա[յ]—Եկայը,  
Աղամա[յ] որդիք, ամէն միաբան աւրհնեմք զարարիշն Աստուած... /Ինըն  
հարիւր և ութսունինըն թիւ այլ ի հետ նորայն (1540): /Ողորմելի Կարապետ  
վարդապետ և իստ անպիտան.../ Տունըս համարով նըսուն, և է սա բան ի-  
մաստութեան:

3. 170ա—187ա [Վարդանայ Արեելցոյ] Աշխարհացոյց է այս և աշխար-  
հաց պատճուրին (համառօտ խմբագրուրին) —... (180ա) Սեաստ՝ Սեբա-  
տիայ է, ուր կան սուրբ Քառասուրն և գետն Ալիս... և այնպէս առնէին Հայք  
մինչև ի ժողովրն Քաղքէդոնի...

Հմմտ. «Աշխարհացոյց Վարդանայ վարդապետի», Փարիզ,  
1960, էջ 23, տող 213—223:

4. 187<sup>ր</sup>—203<sup>ր</sup> Պատմութիւն Յովսիմոսի վարդապետի գնալ ի յԱրէնս ի մայր իմաստութեան և հանդիպումն վարձկանինն (վերջից պակասավոր):

5. 204<sup>ր</sup>—210<sup>ր</sup> [Ղոկասայ վարդապետի Կեղեցոյ] Սա տումար գեղեցիկ և ոտանաւուր— Պատճէն Հըռոմա մեծ տումարին՝ /Պարզեալ Հարցըն մեր նախնի... (սկզբում ունի բանալի-աղյուսակ՝ 204ա):

6. 211ա—215ա [Առաքելի Սիւնեցոյ Յիշատակարան Աստուածաշունչ Կոտակարանաց]— Տէր Առաքէլ դիտող Սիւնեց, /Չուրկ և թաքուր յամէն շընորհաց...

7. 215<sup>ր</sup>—219<sup>ր</sup> Տաղ գեղեցիկ ի Տարսունեցի Խաշատուր վարդապետի. ասացեալ է վասն հոգոյ—... /ի Հազար թվականին/. Եւ ի ու վեց թիւ աւելին (1577)/ Յարմարեցաւ բան կարգին, /Մեր կարեացս որշափ և էին:

8. 219<sup>ր</sup>—220ա Մոլորական յասեղի այսպէս իմացեր:

## ՀԻՇԱՏԱԿԱՐԱՆ

### ԳՐՅԻ

220ա—221ա Փա՛ռ... Արդ, գրեցաւ յԱդամգիրքը ձեռամբ անարժան և անիմաստ սուտանուն սարկաւագ Թուրոսի, ի թւականիս Հայոց ի ԾՀԲ (1623) ամի, ի խնդրոյ բարեմիտ և Հաւատարիմ Ալէխօնոս վարդապետին, որ է դա Խախտեաց գաւառէն, որ այժմ Բարերդ կոշեն, որ ետ գրել ըզսա յիշատակ իւր և ծնողացըն, Հաւըն՝ Պալոսին, մաւըն՝ Ելխարունին, իրիցկնոջն՝ Արզուսին, մահտեսի Լուսիարունին և իւր եղբարցն՝ Առաքելին և Աւազին, Հաւընդրաւրըն՝ Մատուրին և որդոյն՝ Թաղենոսին. ամեն:

Եւ արդ, երես անկեալ աղաշեմ զամենեսեանդ յիշել ի Տէր զանարժան, որք Հանդիպիք սմա կարդալով կամ աւրինակելով, աղաշեմ յիշել ի Տէր զանարժեստ գրիչս՝ Թուրոս սարկաւազս, և ծնողս մեր, որ փոխեալ են առ Քրիստոս, յուսուցիչն իմ՝ տէր Մարութեն, որ փոխեալ է առ Քրիստոս, և այլ ամենայն երախտաւորքն մեր, որ Հոգևոր խրատ են տըւել մեզ, և ձեր յիշողացդ և մեր յիշեցելոց առ Հասարակ ողորմեացի փրկիչն մեր Քրիստոս. ամեն:

Գրեցաւ գաւառս Խախտեաց, ի դուռն Սուրբ Աստուածածնին և Սուրբ Կարպետին, յառաջնորդութեան սուրբ ուխտիս տէր Պետրոս եպիսկոպոսին և միաբանիցս. ամեն:

Դարձեալ կրկին աղաշեմ յձեզ՝ դհանդիպողդ սմա, անմեղադիր լեռուք խոշորութեան գրիս և սղալանացս, զի կար մեր այս է ի դառն և ի նեղութեան Ժամանակիս, որ երերուն և տատանելայլ կան աղջն քրիստոնէից ի ձեռն զատաւրաց և անիրաւ պահանջողաց, որ Ապաղայ փաշան Արգում զալտ արաւ զաւրով:

## ՀԵՏԱԳԱՅԻ

### 169ր Սարգիսը Բարերդացի

/ / / / / / / / / /

Եւ որդի Սուրատ Հասրլին,  
Եկեալ ի Բիւզանդիա,

Զաւրինակս այս գըրել տըւի,  
Զի սայ ինձ յիշատակ լինի  
Ի յանցման յաւովլյրն իմ յետնի:  
Յետոյ տուաք ի վանք երկու ի դուռն Սրբոյն Գէորգայ,  
Ով հանէ՝ անիլծեալ լինի հոգի և մարմին նորա:

222ր (թվականի մատիտագիր հաշվումներ):

## 3

## Ա. Ի Ե Տ Ա. Ր Ա. Ն

Նոր Զուղա—Երեզակ

ՈՂԸ—1649

Գրիչ՝ վահրամ: Մաղկող՝ Մեսրոպ Խիզանցի:

Թերը՝ 245: Եյուր՝ մաղաղաթ: Մեծուրյուն՝  $18 \times 13,5$ : Գրուրյուն՝ երկույուն: Գիր՝ բոլորգիր: Տող՝ 21: Մանրանկարչուրյուն—Ավետում՝ 1ա, Պայծառակերպություն՝ 2ր, Խորաններ՝ 3ր—4ա (Եվսեբիոսի և Կարպիանոսի նկարներով), 5ր—12ա (Համաբարբառ կանոնների), Կիսախորաններ՝ 14ա, 83ա, 196ա, Մատթեոս՝ 13ր, Մարկոս՝ 82ր, Հովհաննես և Պրոխորոն՝ 195ր, բուսական լուսանցաղարդեր և թոշնագիր զարդարդեր: Վիճակ՝ սկզբից թերթահան պակասում են տերունական նկարների մեծ մասը, Դուկաս ավետարանիչի նըկարը, Համապատասխան Ավետարանի կիսախորանը և առաջին 6 գլուխները:

## ՀԻՇԱՏԱԿԱՐԱՆ

## ԳՐԾԻ

242ա—244ա Փա՛ռք... Ես Խիզանցի Մեսրոպ վարդապետս կոչեալ, որ էի տարագնաց եկաւորութեամբ բընակեալ ի Շօլ լոյլորջեալ ալնուամբը՝ Գամբիսակեր[տ] քաղաքիս, որ ըստ այժմու ասի Ասպահան, գրեցի տխեղծ և մեղսաներկ ձեռամբս Մեսրոպ Խիզանցի դպիրս աշակերտ իմոյ Վարհամ գծազրել ետու, և ըստ կարի ոսկենիկար երանդօք վայելչացուցեալ, շնորհեցի եկեղեցից Հայաստանի յալյալյալյալյալ՝ ի վայելումն և ի խրախճանութեանց մանկանց իւրոց, ի ժամանակս տերութեան Պարսից մանկանն Շահ Ապազ կոչեցեալ, յաւուրսն որում դիմի Հարկանէր թագաւորին արևելիան հնդկաց ի վերալյալ բերդին Ղանդահար կոչի ասացեալ, ի թուարերութեանս ՌՂԸ (1649)-ի, Հայրապետութեանս Հայոց տեսոն Փիլիպպոսի խարազնազգեաց ճզնաւորի:

Արդ, սկսեալ եղեւ արտազրերն Ըստահան, ընդ Հովհաննեաւ Սույր Աստուածածնին, և յաւարտն՝ ի սուրբ մենաստան Սույր Կարապետի, որ է նախագահ և երեսի յոյժ ի գաւառս Երեզաղազ, յառաջնորդութեամբ տէր Եսայեա քըրտնաշան վարժապետի, որ յոյժ երկամբ աշխատի ի շինումն սրբոյ եկեղեցուս մեծի կոփածոյ քարամբ գեղեցկաշար ի հիացումն տեսողաց, յօրինելով ձեռամբ յոքնահնար Դափր կոչեցեալ ուստայի, ըստ որում աղեխարշ սրտիւ պազատիմ յիշել զինքն և զարբանակեալ միաբանսն իւր՝ զՄարտիրոս Էպիսկոպոսն, զտէր Յովհաննէս վարդապետն, զտէր Յովհանն և զտէր Առիստակէսն և որք ի սիրով աշակերտ եղեն արուլյալյալ... Յովհաննէս վարդապետն և զՂա-

զար և յԱրխատակէս կիսասարգաւագսն և զԴափը տնտեսն, որ սիրական խրնամածով սփոփէր... և զամենեսեան որք զնովաւ կերան։ Ընդ սոսին և զիս՝ զառածեալոն զՄեսրոպ դպիրս Խիզանցի, և զփեսացեալո իմ և զսիրասնունդ զաշակերտս իմ և զաշխատողս ընդ իս՝ զԳրիգոր արհեստասէրս, նաև ծնողսն իմ՝ զտէր Մարտիրոսն և զԽոնդքարն, և զեղբայրս իմ զտէր Թաղեոսն և զՊարսամն, և զամենայն արեան մերձաւորսն յիշեցէր և Աստուած ողորմի ասացեր. ամէն։

Այս հիշատակարանի սկզբի երեք տողերը (242թ) գրել է Վահրամ գրիչը, իսկ շարունակությունը (243ա—244ա)՝ իր ուսուցիչը Հայոնի մանրանկարիչ Մեսրոպ Խիզանցին։ Մեսրոպ Խիզանցուանվան առաջին անգամ հանդիպում ենք 1603—1604 թվականներին գրված մի ձեռագրում, որը 1975 թվականի ապրիլի 7-ին վաճառվեց Լոնդոնի Սորբի աճուրդային ընկերության կողմից։ Մեսրոպ Խիզանցու կողմից մանրանկարված մեզ հայոնի վերջին ձեռագիրը (1651 թ.) պահպում է Վիեննայի Միսիթարյանների մատենադարանում (№ 93)։ Չեռագիրս, որ նախկինում պատկանել է նյույորքարնակ հնավաճառ Հակոբ Գևորգյանին, 1979 թվականի ապրիլի 23-ին աճուրդում գնել է լոնդոնարնակ մի հայ։